ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Հ. Թումանյանի անվան թիվ 32 հիմնական դպրոց

Առարկա՝ Կենսաբանություն

Թեմա՝ Մարսողություն

Վերապատրաստող՝ Նարինե Կյուրեղյան

Ուսուցչուհի՝ Հասմիկ Դավթյան

2023թ.

Բովանդակություն

1. Ներածություն 2 էջ

2. Գրական ակնարկ 3 էջ

3. Գործնական համատեքստ 7 էջ

4. Ամփոփում 17 էջ

5. Գրականության ցանկ 18 էջ

Ներածություն

Թող աշակերտը չսովորի գիտությունը, թող նա հորինի այն ինքնուրույն:

Ժան Ժակ Ռուսո

Աշակերտները որպես կանոն հիմնականում զբաղված են սպորտային խմբակներ հաճախելով, հեռուստացույց դիտելով ու տարատեսակ խաղերով : Նաև աշակերտներին զբաղեցնում են սոցիալական ցանցերը: Մի խոսքով սովորելու ժամանակ շատ քիչ է մնում: Դասարանի երեխաները հիմնականում անտարբեր են սովորելու հանդեպ: Որպեսզի սովորելու գործընթացը կազմակերպվի արդյունավետ և բացահայտվեն սովորողների կրթական կարիքները, անհրաժեշտ է կիրառել տարբերակված, ինտերակտիվ ուսուցման եղանակով ուսուցում՝ հետաքրքիր և մասնակից դարձնելով աշակերտներին, որը միայն ավանդական ուսուցման մեթոդով չի հաջողվում: Աշխատանքային գործունեության ընթացքում հանդիպում ենք շատ խնդիրների ՝ աշակերտների ներգրավածության , մոտիվացիայի, բանավոր խոսքի, հիշողության, ուշադրության և այլ խնդիրների:Որպեսզի սովորողը կարողանա հաղթահարի այս և մի շարք այլ խնդիրներ, ուսուցչի խնդիրն է դասապրոցեսը կազմակերպել այնպես,որ աշակերտին լինի հետաքրքիր: Կենսաբանության դասերը հետաքրքիր ու հասկանալի անցկացնելը, ինչպես նաև կրթական կարիքների բացահայտելը ,որի հետևանքով աշակերտը կսկսի ինտեգրվել և լավ սովորել, պետք է ակտիվ մասնակցի ուսուցման գործընթացին , որը լավ կազմակերպվում է փոքր խմբերով աշխատելիս:

Տվեք երեխային հետաքրքրասիրություն: Գիտելիքը նա կգտնի ինքը:

Գրականության ակնարկ

[1]Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը:Դիտարկենք այն: Երբ արտաքին աշխարհից տեղեկատվություն ենք ստանում, այն սկզբում առնչվում է մեր կարճաժամկետ կամ աշխատանքային հիշողությանը: Որպեսզի կարողանանք արտաքին աշխարհից տեղեկություն ստանալ, մեզ պետք է ուշադրության կենտրոնացում: Ուշադրությունը կարևոր է ոչ միայն ուսուցման համար, այլև այսօր համարվում է մարդու կյանքի կարևորագույն ռեսուրսը: Եթե կարողանանք աշակերտի ուշադրությունը գրավել, ապա կկարողանանք ներգրավել ամբողջովին դասապրոցեսի մեջ: Ժամանակակից կրթության մեծագույն խնդիրներից մեկն այն է, որ աշակերտների ուշադրությունը գրավված է տարբեր բիզնես ինդուստրիաների, գործունեության տեսակների կողմից: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը



[1]Խաչատրյան Ս. (2020)<Ուսուցման արդյունավետ հնարներ> ԻՆՉՊԵՍ Է ՄԱՐԴԸ ՍՈՎՈՐՈՒՄ

Այսպիսով, սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլը ուշադրության կենտրոնացումն է: Երբ աշակերտը փոքր խմբով աշխատելիս կենտրոնացնում է ուշադրությունը, ուսուցանվող նյութը տեղափոխվում է աշխատանքային կամ կարճաժամկետ հիշողության մեջ:

Մարդու կարճաժամկետ հիշողության հնարավորությունները սահմանափակ են, այսինքն մարդը չի կարող միանգամից շատ բան սովորել: Ըստ գիտնականների մարդը կարող է միանգամից սովորել 4-5 նոր բան: Կենսաբանության դասագրքերում դասերի ժամանակ հաճախ ականատես ենք լինում իրավիճակների, երբ կարճ ժամանակում աշակերտներին փոխանցվում են մի քանի տասնյակ նոր անուններ, տերմիններ ու հասկացություններ: Իսկ ի՞նչ կարելի է անել, որ աշակերտները փոքր խմբով աշխատելիս հնարավորինս շատ բան սովորեն: Նախ և առաջ ուսուցիչը նոր դասը հանձնարարում է աշակերտի ունեցած նախնական գիտելիքի հիման վրա: Խնդիրն այն է, որ գիտելիք ունեցողը հաճախ չի պատկերացնում, թե ինչ է տեղի ունենում նոր դասը դեռևս չիմացող աշակերտի հետ: Ի՞նչ է հասկանում, ի՞նչ չի հասկանում, ի՞նչն է դժվարությամբ տրվում: Պատահական չէ, որ հաճախ ուսուցիչները զարմանում են, թե ինչու աշակերտները հասարակ բաները չեն հասկանում: Իրականում այդ ամենը հասարակ է թվում իմացողի տեսանկյունից: Իսկ դեռևս չիմացողի տեսանկյունից կարող է այլ կերպ լինել: Հետևաբար, շատ կարևոր է աշակերտներին նոր բաներ սովորեցնելիս մանրամասնել և անդրադառնալ՝ ինչո՞ւ է այդպես, ինչի՞ց է բխում այդ հետևությունը, որո՞նք են խնդրի բաղկացուցիչները և նմանատիպ այլ հարցերը: Շատ կարևոր է, որ աշակերտներին առաջադրանքներ տալիս տրվեն այնպիսի օրինակներ, որոնցում հարցի պատասխանի մի մասը կա կամ ներառված են խնդրի լուծման որոշ քայլեր: Սա աշակերտներին քայլ առ քայլ սովորելու հնարավորություն է տալիս: Փոքր խմբով աշխատելիս դասը լիարժեք է ստացվում , երբ իրականացնում ես պատկերի , դիտակտիկ նյութերի և տեքստի համադրում: Մենք ապրում ենք մի ժամանակում, երբ պատկերներ ստեղծելու հնարավորությունները մեծացել են: Արդյունքում սովորողները ավելի լավ են յուրացնում այն ամենը, ինչը ուղեկցվում է պատկերներով: Դրանք կարող են լինել նկարներ, լուսանկարներ, գծագրեր, գծապատկերներ : Հետևաբար՝ սովորողների կրթական կարիքների բացահայտման և դրան համապատասխան ուսուցման գործընթացում շատ մեծ դեր ունի այն հանգամանքը, թե որքանով են աշակերտները տեղյակ իրենց իմացածից ու չիմացածից: Սովորողները լավ են սովորում, երբ տրված

հանձնարարությունները մատչելի են և ոչ թե շատ դճվար: [2]ՈՒսումնական գործունեության պրոցեսը ենթարկվում է մի շարք ընդհանուր օրինաչափությունների: Ամենից առաջ անհրաժեշտ է, որպեսզի ուսուցիչը սիստեմատիկորեն երեխաներին ներգրավի ուսումնական իրադրությունների մեջ, նրանց հետ միասին գտնի ու ցուցադրի համապատասխան ուսումնական, վերահսկման ու գնահատման գործողությունները:

Իսկ երեխաները, իրենց հերթին, պետք է գիտակցեն ուսումնական իրադրությունների իմաստը և հետևողականորեն վերարտադրեն բոլոր գործողությունները:

Ուսուցչին կարող է թվալ, որ ուսումնական նյութի հետ երեխաներին ծանոթացնելու հետ ձգված ու ծավալուն եղանակը ավելորդ է: Բայց իրականում դա այդպես չէ: Հենց ուսումնական իրադրության նախադրյալների և նրա դերի այդպիսի բացահայտումն է եերխաների իմացական ակտիվության, ուսման նկատմամբ նրանց հետաքրքրության զարգացման ամենաէական պայմաններից մեկը:

[3]Սովորողների կրթական կարիքների բացահայտման և դրան համապատասխան ուսուցման գործընթացի կազմակերպման առանձնահատկ ձևերից է փոքր խմբով ուսուցումը, չնայած երբեմն դասի տեսակից կախված լինում են նաև դժվարություններ: Փոքր խմբով աշխատանքը ուսուցման կազմակերպման ձև է , որը սովորողներին հնարավորություն է տալիս իրենց գիտելիքներն ու փորձը դասընկերների հետ փոխանակել , համատեղ խնդիրներ լուծել:Աշակերտն ավելի լավէ սովորում ,երբ ակտիվ մասնակցում է ուսուցման գործնթացին :

Գլխավոր նպատակը՝ **սովորել սովորեցնել**

Փոքր խմբերով ուսուցումն ունի հետևյալ նպատակները

- ✓ Զարգացնում է տարբեր բնույթի խնդիրներ լուծելու կարողություն
- ✓ Ձևավորում է հաղորդակցման հմտություն
- ✓ Աշակերտները սովորում են միմյանցից

Պետրովսկի Ա.Վ. թարգմանիչ Նալչաջյան Ա.(1977)<Տարիքային և մանկավարժական հոգեբանություն>
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

- ✓ Զարգացնում է աշակերտների պատասխանատվության զարգացումը, միմյանց հաշվետու լինելու հատկությունը՝ խմբի ընդհանուր հաջողությունն

ապահովելու հարցում

- ✓ Խթանում է թիմային աշխատանքը
- ✓ Ապահով և նպաստավոր միջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևորելու համար
- ✓ Քննարկումների միջոցով ապահովում է աշակերտների համոզմունքը
- ✓ Ընձեռնում է ակտիվ մասնակցություն և ինքնադրսևորման հնարավորություն:

Ակնկալվող արդյունքներ

- ✓ Նոր նյութն ավելի լավ կհասկանան փոքր խմբում աշխատելու արդյունքում
- ✓ Համագործակցության արդյունքում կկարողանան սովորեցնելով ավելի լավ սովորեն: Կկարողանան իրենց հնարավորությունները ճիշտ դրսևորել թիմային աշխատանքում: Կգիտակցեն իրենց անելիքի կարևոր դերը թիմում
- ✓ Ինքնուրույն աշխատելու արդյունքում կզարգանան վերլուծելու, տրամաբանելու, համադրելու կարողությունները: Կհմտանան կյանքում ինքնուրույն որոշումներ կայացնելու, արարքների համար պատասխանատվություն կրելու մեջ:

Նպատակին հասնելու համար պետք է հաղթահարեն մի շարք դժվարություններ: Խումբը պետք է փորձի ընդհանրություններ գտնի տեսակետների միջև, կարողանան ճիշտ հասկանան տրված առաջադրանքը, աշխատեն խմբի բոլոր անդամները:

[3] Գյուլազյան Վ. (2009) <Ուսուցչի ուղեցույց տետր, օրվա դասի պլան> ՓՈՔՐ ԽՄԲՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ և ՆՊԱՏԱԿԸ

Գործնական համատեքստ 8

Աշխատանքի իրականացման համար որպես թիրախային խումբ ընտրել եմ հիմնական դպրոցի <<կենսաբանություն>> առարկայի դասաժամը: Կենսաբանության ուսուցման նպատակներն են, որ աշակերտի մոտ

- ✓ առաջանա հետաքրքրություն կենսաբանական երևույթները ուսումնասիրելու նկատմամբ
- ✓ կարողանա բնության մեջ և օրգանիզմում ընթացող երևույթների մեջ տեսնել օրինաչափություններ և ստացած գիտելիքը կիրառել տարբեր կենսական հիմնախնդիրները լուծելու ժամանակ
- ✓ զարգանա հետազոտելու ունակություն-հմտություններ, որոնք կկիրառի նոր գիտելիք ձեռք բերելու ժամանակ

Աշակերտների մոտիվացիայի բարձրացման և թեմայի լիակատար յուրացման համար ընտրվել է փոքր խմբերով ուսուցման եղանակը, քանի որ ուսուցման այս եղանակը նպաստում է աշակերտների գիտելիքների մոբիլիզացմանը, ստեղծագործ մտքի, բանավոր խոսքի, հիշողության, ուշադրության, անկախ մտածելակերպի, համբերության, հանդուրժողականության զարգացմանը, ինչը դրական ազդեցություն ունի ոչ միայն տվյալ առարկայի պարագայում, այլև ընդհանուր զարգացման գործում: Դասապրոցեսի ուսուցումն իրականացրել ենք ի պատասխան աշակերտների ունակությունների, դասարանի մակարդակում խմբերի բաժանելու տեսքով: Այս մոտեցման հիմքում ընկած է ունակությունների գաղափարը, այսինքն աշակերտները միևնույն առաջադիմությունը դրսևորում են կրթակարգի բոլոր դասընթացների դեպքում: Հասանելի դարձնել յուրաքանչյուր դաս բոլոր սովորողների համար՝ ընդունելով, որ ցանկացած աշակերտ ունակ է առաջադիմելու և հնարավորություն տալ յուրաքանչյուրին առաջադիմելու իր ներուժի չափով: [4]Սակայն խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ <<գլուխ են պահում>>: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է: Հետևաբար, նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում:

[4]Խաչատրյան Ս. (2020)<Ուսուցման արդյունավետ հնարներ> Ուսուցման մեթոդներ և հնարներ

Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել: Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ

այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան: Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել: Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը:

8-րդ դասարանում իմ նախաձեռնությամբ կազմվել էր տարասեռ փոքր խմբեր՝ համամասնորեն ընդգրկվելով ուսումնառության արդյունավետության տարբեր արդյունքներ ունեցող աշակերտներ՝ աղջիկներ և տղաներ: Ստեղծված խմբերի քանակը երեքն էին: Սեղաններն ու աթոռները դասավորել էինք այնպես, որ հնարավոր լիներ իրականացնել համագործակցային աշխատանք և բոլորի համար տեսանելի լիներ էկրանը: Նախօրոք սեղաններին դրվել էր խմբերի համարները, A4 ֆորմատի թղթեր և գրիչներ, սեղաններին դրվել էր նաև խմբային աշխատանքների պատասխանները գրանցելու համար նախատեսված ձևաթղթերը: Խմբային աշխատանքների թեման <<Մարսողական համակարգի ամփոփում>> բաժանելով խմբերի միջև ստեղծել էի աշխատանքային միջավայր: Ցանկացած հաջորդող առաջադրանք պետք է լիներ նպատակային և գրավիչ, որպեսզի խթաներ աշխատանքի արագ ավարտը: Առաջին փուլում աշակերտները աշխատում էին նույն առաջադրանքի վրա: Բոլորն ունեին հեռախոսներ,աշակերտներին տրվեց LearningApps.org ծրագրի գախտնաբառը և սկսեցին աշխատել: Երեք խմբերն էլ հանձնարարությունը ավարտեցին նույն ժամանակահատվածում, քանի որ ժամանակը հստակ սահմանված էր՝ 12 րոպե: Գրանցեցինք արդյունքները և սկսեցի երկրորդ փուլը: Այս փուլում խմբերի համար պատրաստել էի տարբեր առաջադրանքներ և կրկին սահմանել հստակ ժամանակ՝ 12 րոպե, որից 5 րոպե պատրաստվելու համար, յուրաքանչյուր խմբին 3 րոպե աշխատանքը ներկայացնելու համար և1 րոպե փոխադարձ գնահատման համար :Առաջին խմբին հանձնարարվեց գրաֆիկական պատկերի վրա ցույց տալ մարսողական համակարգի կազմությունը, ներկայացնել նշանակությունը և տրված օրգաններից առանձնացնել մարսողական համակարգի օրգանները:

https://create.kahoot.it/details/0fcda940-5e28-4c12-bbbd-a9648138af9a

Երկրորդ խմբին հանձնարարեցի լրացնել տրված աղյուսակը մարսողական ֆերմենտների վերաբերյալ: Երրորդ խմբին հանձնարարեցի ներկայացնել ատամների և մարսողական հյութերի դերը մարսողության գործընթացում և նշել օրգանական նյութերի ճեղքավորման արդյունքները: Աշխատանքը սկսելուց 5 րոպե հետո խմբերը

ներկայացրեցին իրենց աշխատանքները, կատարեցին փոխադարձ գնահատում: Աշխատանքի երրորդ փուլում հանձնարարվեց ինքնուրույն թեստային աշխատանք 7 րոպե տևողությամբ:

Նպատակը՝ Դասի ավարտին աշակերտը կկարողանա

- Առանձնացնել մարսողական համակարգի օրգանները
- Թվել մարսողական գեղձերը
- Ներկայացնել ատամների և մարսողական հյութերի դերը մարսողության գործընթացում
- Գրաֆիկական պատկերի վրա ցույց տալ մարսողական համակարգի կազմությունը
- Բացատրել մարսողության ընթացքում օրգանական նյութերի ճեղքավորման արդյունքը

Անհրաժեշտ իրեր՝ A4 ֆորմատի թուղթ, գրիչ, համակարգիչ, հեռախոս, ինտերնետ, գրատախտակ, կավիճ

Դասարանը նախապես բաժանել 3 խմբի (նախապես բաժանված խմբերը տեղադրել առցանց հարթակում) -5րոպե

Առաջադրանք 1

LearningApps.org ծրագրի միջոցով ամփոփում, 10

Առաջադրանք 2

Յուրաքանչյուր թիմի տրվում է առանձին առաջադրանքներ:

1-ին խումբ Գրաֆիկական պատկերի վրա ցույց տալ մարսողական համակարգի կազմությունը և ներկայացնել նշանակությունը: Ձեզ տրված օրգաններից առանձնացնել մարսողական համակարգի օրգանները:



2-րդ խումբ-Լրացրե՛ք ձեզ տրված աղյուսակը:

Մարսողական համակարգի բաժինը	**Ո՞ր նյութերի վրա է ազդում**	**Ներգործության միջավայրը**
Բերանի խոռոչ		
Ստամոքս		
Բարակ աղի		

3-րդ խումբ Ներկայացնել ատամների և մարսողական հյութերի դերը մարսողության գործընթացում: Բացատրել մարսողության ընթացքում օրգանական նյութերի ճեղքավորման արդյունքը:

Կատարել փոխադարձ գնահատում

Առաջադրանք 3

Ինքնուրույն աշխատանք

1. Մարսողական համակարգի օրգանները դասավորել ճիշտ հաջորդականությամբ (1 միավոր)

Կլան, տասներկումատնյա աղի, կույր աղի, կերակրափող, ստամոքս, բերանի խոռոչ, ուղիղ աղի, բարակ աղի

2. Մարսողությունը կազմված է 2 փուլից՝ սննդի
   1. ---------- և 2. ---------- մշակումներից (2 միավոր)
3. Որ գեղձերի ծորաններն են բացվում տասներկումատնյա աղիքի մեջ (2 միավոր)

   1.----------

   2.----------

4. Յուրաքանչյուր ատամ կազմված է (1 միավոր)

1.---------- 2.---------- 3.----------

5. Նշել մարսողական ֆերմենտները (3 միավոր)

Բերանի խոռոչ -

Ստամոքս **-**

Բարակ աղի -

6. Ինչպես է կատարվում մարսողության նյարդային կարգավորումը (1 միավոր)

Պատասխան----------

Ելակետային գիտելիքների վերհանում

1-ին խումբ	2-րդ խումբ
1. Ենթաստամոքսային գեղձի ազդեցությունը մարսողական պրոցեսի վրա 2. Թքագագեղձերի տեղադրության հայտնաբերումը	1. Մարսողության նշանակությունը մարդու օրգանիզմի համար 2. Ինչպիսի փոփոխությունների է ենթարկվում սնունանյութը բերանի խոռոչում

3-րդ խումբ
1. Հացի քաղցր համը ինչով է պայմանավորված, երբ մենք այն երկար ժամանակ ենք ծամում 2. Մարսողության ուսումնասիրման մեթոդները

Խմբերի միջև կատարվեց փոխադարձ բացատրություն և բոլորը տիրապետեցին նոր նյութին

Խմբային աշխատանքը ունի առավելություններ, ինչու չէ նաև թերություններ: Մեր օրինակով ուժեղ աշակերտը փոնում էր թույլ աշակերտին ներգրավեր աշխատանքի մեջ, բայց կային նաև թերություններ՝ հակասությունների պատճառով վիճում էին և աղմկում: Աշխատանքում յուրաքանչյուր դաս պետք է ուղղված լինի սովորողների ուսուցման, դաստիարակության և զարգացման նպատակների իրագործմանը: Իմ նպատակն է <Կենսաբանություն> առարկայի դասաժամերի ժամանակ իմ և սովորողների ուսումնական համատեղ գործունեության նախապես պլանավորված արդյունքների իրականացումը: Դասի նպատակները աշակերտների համար պետք է լինեն հասկանալի և ընդունելի: Նպատակը կարողանան ընդանրացնել,ամրապնդել, խորացնել թեմաների վերաբերյալ ունեցած գիտելիքները: . Ամրապնդեն փորձարարական հմտությունները և ունակությունները զարգացնեն մտածողությունը, համացանցից տեսանյութերը դիտելուց և փորձերը կատարելուց հետտրամաբանական կատարեն:

Աշակերտները վերջնարդյունքում կզարգացնեն ստեղծագործական հմտությունները, հարցերի միջոցով ուսումնասիրություններ կատարելու հմտությունը, կներկայացնեն նշված թեմաները միջառարկայական կապերն այլ առարկաների հետ զարգացնելով աշխարահայացքը ձևավորելով արժեքային համակարգը, կզարգացնեն մտքեր փոխանակելու, խմբային ակտիվ աշխատանք ձևավորելու, նշված ժամանակահատվածում առաջադրանքը կատարելու, խմբի աշխատանքային կանոները պահպանելու կարողությունները և հմտությունները, աշխատանքները կատարելուց հետո տրամաբանական եզրակացություններ անելու կարողությունները՝ զարգացնելով համալիր բնագիտական մտածելակերպը՝ մտքի հստակություն բանավոր խոսքի մշակույթի զարգացում, մտածողությունը՝ վերլուծության, համեմատության և ընդհանրացման միջոցով:

Կարծում եմ կախված դասարանի առաջադիմությունից, ընտրված մեթոդից, մատուցման ձևից միշտ չէ , որ խմբային աշխատանքը տալիս է իր սպասված արդյունքը:

[7]Խմբային աշխատանքը մեծ տարածում ունի ժամանակակից դպրոցներում:Խմբային աշխատանքի խոցելի կողմերից մեկն այն է, որ առանձին աշակերտներ <<թաքնվում են>> խմբի հետևում:

[7]Խաչատրյան Ս. (2020)<Ուսուցման արդյունավետ հնարներ> Ուսուցման մեթոդներ և հնարներ

Նման իրավիճակում ուսուցիչները կարող են կիրառել<<ես-դու-մենք>> հնարը: Յուրաքանչյուր աշակերտի առաջարկել խմբային աշխատանքի վերջում ներկայացնել սեփական ներդրումը խմբի աշխատանքում, խմբի մյուս անդամների ներդրումը և ընդհանուր խմբի որակը:

Ամփոփում

Տվյալների վերլուծությունը կատարվել է աշակերտներին տրված համապատասխան առաջադրանքների արդյունքների հիման վրա, որոնք արտացոլում են սովորողների գիտելիքների մակարդակը: Փոքր խմբով դասերը իրենց ձևաչափի մեջ ունեն և առավելություններ և դժվարություններ և տարբերվում են նրանով, որ նախկինում էլ էին դասին պատրաստված ,սակայն խմբով աշխատելու եղանակը դասը ավելի հետաքրքիր, ժամանակակից և ուսուցանող դարձրեց աշակերտների ստեղծագործական միտքը և երևակայությունը: Դասը կազմակերպվեց ավելի հագեցած և բովանդակալից: Աշակերտները հստակ ներկայացնում են տեսական հարցերը՝ մտքի հստակությամբ, բանավոր խոսքի հակիրճության մշակույթի զարգացումով , հստակ գտնում են տրամաբանական հարցերի պատասխանները՝ խմբերի համագործակցային եղանակով և պարզաբանելով տալիս են ճշգրիտ պատասխանը,կարողանում են աշխատել իրենց առջև դրված գծագրերով և աղյուսակներով, կարողանում են ակտիվ ստեղծագործական մասնակցությամբ բացահայտել միջառարկայական և ներառարկայական կապերը և փոխանակել մտքեր:

Փոքր խմբով ուսուցման բովանդակության յուրացման գործընթացում յուրաքանչյուր աշակերտի համար ապահովվեց պայմաններ՝ աշակերտի ընդունակությունների, հետաքրքրությունների, հակումների, ճանաչողական պահանջմունքների բավարարման ու մաքսիմալ զարգացման համար: Փոքր խմբով աշխատելու մեթոդը ինձ հնարավորություն ընձեռեց ուսումնական պրոցեսը կազմակերպել՝ հաշվի առնելով անձի անհատական առանձնահատկությունները և ապահովեց նյութի հեշտ յուրացումը՝ համապատասխանեցնելով երեխաների ճանաչողական պահանջմունքներին և անհատական առանձնահատկություններին: Աշակերտների մեջ ստեղծված մրցակցությունը հիմնականում առաջ մղեց աշակերտներին, արդյունքում բարձրացավ ուսման նկատմամբ հետաքրքրությունը: Բոլորը հավասար են այստեղ,

բոլորը զբաղված են, բոլորն են պատկերացնում դասապրոցեսում իրականացվող դասի բովանդակությունը:

Գրականության ցանկ

1. Խաչատրյան Ս. (2020)<Ուսուցման արդյունավետ հնարներ> Ինչպես է մարդը սովորում

2. Պետրովսկի Ա.Վ. թարգմանիչ Նալչաջյան Ա.(1977)<Տարիքային և մանկավարժական հոգեբանություն> Ուսումնական գործունեության ձևավորումը

3. Գյուլազյան Վ. (2009) <Ուսուցչի ուղեցույց տետր, օրվա դասի պլան> Փոքր խմբով աշխատանքի նկարագրությունը և նպատակը

4. https://create.kahoot.it/details/0fcda940-5e28-4c12-bbbd-a9648138af9a

5. Խաչատրյան Ս. (2020)<Ուսուցման արդյունավետ հնարներ> Ուսուցման մեթոդներ և հնարներ